Սիպիլ

Անէացում

Անապատ մը կը տարածվի շուրջն հոգվույս,
Ուրկե կյանքի ամեն բեղբոջ կուտա խույս.
Ոչ մեկ սրլացք, ոչ մեկ ընձյուղ, ոչ մեկ ալիք կը թավալի,
Երկինքն ի վեր չի բարձրանար բուխերիկ մը հորձանքով լի.
Ո՞ւր փնտրրեմ և ո՞ւր գտնեմ ես հուզումներս իմ երբեմնի:

Ցամքած է շունչս հեղձամրղձուկ.
Ցավ չեմ ըզդար, չունիմ արցունք:
Եթերին մեջ ուր օդ չրկա,
Հոգիս իսպառ կ՚անշարժանա...

Եվ բեկորի մը պես սառի,
Կը քարանա, կը մարմարի:
Ո՛հ, շըշու՛կ մը, գեթ հառա՛չ մը, շի՛թ լացի…
Հով մ՚որ շարժե եթերին մեջ կայծ մը բոցի,
Ո՛հ, իմ վիշտերս, հեծերն հոգույս տվե՛ք ինծի:

1924